ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Զեկույց

Երևան 2024

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

JUREMONIA
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՔԱՐԵՖՈՐՄՈՒՄՆԵՐԻ ՄԵՏՈԴԻՍԱՐԿՈՒՄ

Զեկույց

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

NETHERLANDS HELSINKI COMMITTEE

PENAL REFORM INTERNATIONAL

CIVIL SOCIETY INSTITUTE ARMENIA

SOCIAL JUSTICE NGO

FOUNDATION
law development and protection

RIGHTS CENTRE

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (www.juremania.am) ծրագրի շրջանակում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի կենտրոն» ՀԿ-ն և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հեղինակներ՝ Տաթևիկ Ղարիբյան, Աննա Մարալյան

© 2024 Իրավունքի կենտրոն ՀԿ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
Հեռ՝ +374 96 290739
Էլ. հասցե՝ info@rights.center
Կայքէջ՝ www.rights.center

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ **3**
Ներածություն **4**
Մեթոդաբանություն **5**
Այլընտրանքային խափանման միջոցների բնութագիր **6**
Տնային կալանք **9**
Շփում այլ անձանց հետ/հյուրընկալել 13
Այլ իրավունքներ 15
Սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն 18
Վարչական հսկողություն **22**
Վերահսկողություն 23
Եզրակացություն **25**
Առաջարկություններ **26**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտավ Քրեական դատավարության նոր օրենսգիրքը: Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ընդունումը ամրագրված էր ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության հավելվածով հաստատված գործողությունների շարքում: Քրեական դատավարության նոր օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) ներդրվեցին նորարարական մոտեցումներ և նոր ինստիտուտներ: Օրենսգիրքը ընդլայնել է խափանման միջոցների շրջանակը, ինչպես նաև նախատեսել է այլընտրանքային խափանման միջոցների համակցված կիրառման հնարավորություն:

Հաշվի առնելով ընդունված փոփոխությունները՝ «Իրավունքի կենտրոն» ՀԿ-ն նախաձեռնեց տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների իրավակիրառ պրակտիկայի հետազոտություն՝ «Իրավունքի պաշտպանության և զարգացման» հիմնադրամի հետ իրականացվող «Հանուն քրեական և վարչական վարույթների և դատական ակտերի արդյունավետ կիրառության» ծրագրի շրջանակներում:

Հետազոտության հիմնական նպատակն էր ուսումնասիրել տնային կալանքի և վարչական հսկողության կիրառությանն առնչվող հարցեր, վերհանել իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները և ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկուններ:

Հետազոտության արդյունքում բացահայտվել են տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառության խնդիրները, մշակվել են առաջարկություններ: Բացի դրանից, կազմվել է ստուգաթերթ դատավորների համար՝ տնային կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ կիրառելու համար: Հետազոտության վերջնանպատակը քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությունն է՝ կապված տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման հետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդների կիրառությամբ: Ուսումնասիրվել են փաստաթղթեր և իրականացվել են մասնագետների հետ խորին հարցազրույցներ:

Փաստաթղթերի ուսումնասիրություն

Ուսումնասիրվել են ներպետական իրավական ակտերը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Առանցքային հետևյալ օրենսդրությունն է ուսումնասիրվել՝ Քրեական դատավարության օրենսգիրքը, Պրոբացիայի մասին օրենքը, Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենքը, Ոստիկանության մասին օրենքը:

Հարցազրույցների իրականացում

Ընդհանուր առմամբ իրականացվել է 11 խորին հարցազրույց՝ դատախազների, քննիչների, փաստաբանների, պրոբացիայի ծառայության ներկայացուցիչների, ինչպես նաև դատավորների հետ: Հարցազրույցի համար կազմվել է հարցաթերթ՝ հաշվի առնելով առկա իրավակարգավորումները և դրանից բխող հնարավոր խնդիրները: Հարցազրույցների արդյունքները վերլուծվել են ընդհանրական կերպով՝ երաշխավորելով հարցազրույցի մասնակիցների անանունությունը:

Վիճակագրություն

Հետազոտության համար կարևոր որոշ հարցերի վերաբերյալ հավաքագրվել են վիճակագրական տվյալներ՝ ՀՀ գլխավոր դատախազությունից և ՀՀ քննչական կոմիտեից: Փաստաթղթում, նախ, ընդհանրական ձևով ներկայացված են այլընտրանքային խափանման միջոցների վերաբերյալ իրավակարգավորումները: Այնուհետև առանձին-առանձին անդրադարձ է կատարված տնային կալանքի և վարչական հսկողության իրավակարգավորումներին և դրանց կիրառության հետ կապված գործնականում առաջացող խնդիրներին: Խնդիրների վերլուծության հիման վրա արված են հետևություններ, որոնց լուծման նպատակով մշակվել են առաջարկություններ:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանվում են խափանման միջոցների տեսակները: Խափանման միջոցներն են կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները: Այլընտրանքային խափանման միջոցներն են՝

1. տնային կալանքը.
2. վարչական հսկողությունը.
3. գրավը.
4. պաշտոնավարման կասեցումը.
5. բացակայելու արգելքը.
6. երաշխավորությունը.
7. դաստիարակչական հսկողությունը.
8. զինվորական հսկողությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցված, եթե հնարավոր է ապահովել դրանց պայմանների միաժամանակյա պահպանումը: Տնային կալանքը և վարչական հսկողությունը կարող է կիրառել միայն դատարանը: Այս խափանման միջոցները կարող են համակցվել նաև այլ խափանման միջոցների հետ: Օրինակ, տնային կալանքը կարող է համակցվել գրավ խափանման միջոցի հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածով կարգավորվում է խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը: Խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝

1. մեղադրյալի փախուստը կանխելու համար կամ
2. մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար կամ
3. մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար[1]:

Այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել նշված հանգամանքների վերաբերյալ ողջամիտ ենթադրության առկայության դեպքում[2]:

Խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները[3]:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 116-րդ հոդված, մաս 2
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 122-րդ հոդված, մաս 5
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 116-րդ հոդված, մաս 3

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու հարցի քննության դատական նիստը դռնփակ է: Դատարանը կարող է կողմի միջնորդությամբ դատական նիստից առաջ կամ դրա ընթացքում որոշում կայացնել դատական նիստը դռնբաց անցկացնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանում խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վարույթի առարկան են կազմում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման կամ կիրառված խափանման միջոցի ժամկետի երկարաձգման անհրաժեշտությունը և իրավաչափությունը, ավելի մեղմ խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը, իսկ ձերբակալված մեղադրյալի նկատմամբ՝ նաև ձերբակալման իրավաչափությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ երեք որոշումներից մեկը.

1. միջնորդությունը մերժելու մասին.
2. միջնորդությունը մասնակի բավարարելու մասին.
3. միջնորդությունն ամբողջությամբ բավարարելու մասին:

Եթե դատարանը կայացնում է նշված 288-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ կետով նախատեսված որոշումներից որևէ մեկը, ապա դրանում հստակորեն սահմանում է կիրառվող խափանման միջոցի **տեսակը** և **պայմանները**:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությամբ անցկացվում են դատալսումներ՝ կողմերի հավասարության և մրցակցության հիման վրա, քննիչի և մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ: Մեղադրյալի ներկայության ապահովման պարտականությունը կրում է միջնորդությունը հարուցած պաշտոնատար անձը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրյալի պարտադիր մասնակցության կանոնից բացառություն են հետևյալ դեպքերը.

1. մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի չէ, կամ նա գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս.
2. խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վարույթի մասով՝ մեղադրյալը կամովին և գրավոր հրաժարվել է դատալսումներին մասնակցելու իրավունքից, ունի պաշտպան, որը մասնակցում է խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությամբ դատալսումներին, և միաժամանակ դատարանը չի որոշել, որ դատալսումներին մեղադրյալի մասնակցությունը պարտադիր է:

Տնային կալանքի և վարչական հսկողության կիրառման կարգի և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դրույթները: Տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան[4]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ իրականացվում է հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, չվնասել դրանք, ինչպես նաև արձագանքել իրավասու մարմնի հսկողության ազդանշաններին:

Սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Պրոբացիայի ծառայությունը:

Պրոբացիայի մասին օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե էլեկտրոնային հսկողության միջոցի տեխնիկական՝ գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կամ բջջային կապի անհասանելիության կամ էլեկտրաէներգիայի բացակայության կամ տնային կալանքի վայրը բնակվելու համար ոչ պիտանի լինելու պատճառով էլեկտրոնային հսկողության սարքավորումները հնարավոր չէ տեղադրել դատական ակտում նշված խափանման միջոցը՝ տնային կալանքը կրելու համար սահմանված վայրում, կամ մեղադրյալը չի հանդիսանում դատական ակտում նշված տնային կալանք խափանման միջոցը կրելու համար սահմանված տան կամ բնակարանի սեփականատերը, իսկ սեփականատերը չի տալիս իր տանը կամ բնակարանում էլեկտրոնային հսկողության սարքավորումներ տեղադրելու համաձայնություն, ապա Պրոբացիայի ծառայությունը էլեկտրոնային հսկողության սարքավորումները տեղադրելու անհնարինության մասին անհապաղ հայտնում է վարույթն իրականացնող մարմնին:

Էլեկտրոնային հսկողությունն իրականացվում է Գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող կամ ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ այլ տեխնիկական սարքերի և էլեկտրոնային ծրագրերի կիրառմամբ, որոնք հնարավորություն են տալիս պարզել պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, տեղաշարժը, վարքագիծը և դատական ակտով սահմանված սահմանափակումների պահպանումը: Էլեկտրոնային հսկողության կիրառման համար օգտագործվող սարքավորումներն ամրացվում են պրոբացիայի շահառուին կամ տեղադրվում են վերջինիս բնակության կամ գտնվելու վայրում: Էլեկտրոնային հսկողության միջոցները կիրառվում են միայն այն ժամանակահատվածում, որը նախատեսված է դատական ակտով[5]:

Տնային կալանքը և վարչական հսկողությունը՝ որպես խափանման միջոցներ, սկսել են կիրառվել 2023 թ. հունվարի 1-ից[6]:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 123-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր

5. Պրոբացիայի մասին օրենք, 43-րդ հոդված

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 483-րդ հոդված, մաս 14

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանվում է տնային կալանքը, որպես մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը:

Հետազոտության մասնակիցները դրական են գնահատում տնային կալանք խափանման միջոցի ներդնումը: Տնային կալանքը կարող է կիրառվել ինչպես ի սկզբանե խափանման միջոց ընտրելիս, այնպես խափանման միջոցը փոխելու արդյունքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե խափանման միջոցի գործողության ընթացքում փոխվել կամ վերացել են դրա իրավաչափության պայմանները, վարույթն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին:

Դատախազության վիճակագրության համաձայն՝ 2023թ. ընթացքում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2040 միջնորդություն[7], որոնցից բավարարվել է 1559-ը և մերժվել է 481-ը:

2023 թ.-ին դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 114 միջնորդություն, որից բավարարվել է 87-ը, մերժվել՝ 27-ը, իսկ 232 դեպքով դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է տնային կալանք տեսակի խափանման միջոց:

ՀՀ քննչական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2023 թ. ներկայացվել է տնային կալանքի 91 միջնորդություն, որից 65-ը բավարարվել է, իսկ 26-ը՝ մերժվել:

Վիճակագրության տարբերությունը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու վարույթը հարուցվում է քննիչի, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատախազի միջնորդության հիման վրա[8]: Դատալսումներին մասնակցության իրավունք ունեն հսկող դատախազը, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանը և օրինական ներկայացուցիչը[9]:

Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու հարցի քննության դատական նիստը դռնփակ է: Դատարանը կարող է կողմի միջնորդությամբ դատական նիստից առաջ կամ դրա ընթացքում որոշում կայացնել դատական նիստը դռնբաց անցկացնելու մասին[10]:

7. Չի ներառում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով «Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը» ներկայացված կալանքների թիվը

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 285-րդ հոդվածի 1-ին մաս

9. ՀՀ քրեական դատավարթայն օրենսգիրք, 287-րդ հոդվածի 3-րդ մաս

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 287-րդ հոդվածի 4-րդ մաս

Տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կալանքի համար սահմանված դրույթները: Տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան[11]: Եթե մեղադրյալի նկատմամբ կիրառվում է ազատազրկումը որպես պատժատեսակ, տնային կալանքի ժամկետը հաշվակցվում է ազատազրկման ձևով նշված պատժին 1 օրը հաշվելով 1 օրվա դիմաց[12]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային որոշումների համաձայն՝ տնային կալանքը իր խստության աստիճանի պատճառով համարվում է ազատությունից զրկում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի լույսի ներքո[13]: ՄԻԵԴ-ը համարում է, որ ազատությունից զրկելու այս տեսակի համար անհրաժեշտ են պատշաճ և բավարար հիմքեր, ինչպես նախնական կալանքի դեպքում: Տվյալ դեպքում ՄԻԵԴ-ը կիրառում է ազատությունից զրկման միևնույն չափանիշները՝ անկախ այն հանգամանքից, թե դիմումատուն որտեղ է կալանավորված[14]:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ միտումն այնպիսին է, որ սկզբում կալանքն է կիրառվում որպես խափանման միջոց, միայն հետագայում այն փոխվում է տնային կալանքի[15]: Դատարաններն անմիջապես չեն ընտրում առավել մեղմ տեսակի խափանման միջոցներ, այլ հակված են աստիճանաբար փոխելու դրանք: Ավելի մեղմ տեսակի խափանման միջոցներ կիրառվում են դատական վարույթի փուլում, այլ ոչ մինչդատական վարույթի փուլում: Հետազոտության մասնակիցներից ոմանք նշեցին՝ եթե տնային կալանքի սահմանափակումների նկատմամբ լիարժեք վերահսկողություն հնարավոր լիներ իրականացնել, ապա այն՝ որպես առաջին անգամ կիրառվող խափանման միջոց, ավելի հաճախ կկիրառվեր: Արդյունքում, տնային կալանքը ներկայումս ավելի հաճախ կիրառվում է դատաքննության փուլում: Բայց ամեն դեպքում հաշվի են առնվում քրեական գործի առանձնահատկությունները՝ գործի հանգամանքները, մեղսագրվող արարքի բնույթը, ծանրությունը և այլն: Օրինակ, հետազոտության մասնակիցներից ոմանք նշեցին՝ եթե անձը մեղադրվում է տելեգրամյան ալիքների միջոցով թմրանյութեր վաճառելու մեջ, ապա տնային կալանք դատարանները կխուսափեն կիրառել, քանի որ անձը կարող է հասանելիություն ունենալ հեռախոսի և ինտերնետի, կարող է խոչընդոտել նախաքննությանը, վերացնել իր հաշիվը տելեգրամում և այլ հետքեր կամ նորից շարունակել կատարել հանցանքը: Փաստացի հնարավոր չէ

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 123-րդ հոդված, 5, 6-րդ մասեր

12. ՀՀ քրեական օրենսգքրի 79-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, անկախ ՀՀ իրավազորությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը հաշվակցվում է կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 1 օրվա դիմաց, ազատության սահմանափակման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 2 օրվա դիմաց, իսկ հանրային աշխատանքների դեպքում՝ 1 օրը 8 ժամի դիմաց:

13. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 5-րդ հոդված՝ Ազատության և անձնական անձեռնմխելության իրավունք
Buzadji v. the Republic of Moldova [GC], 2016, no. 23755/07, § 104

14. Navalnyy v Russia (2), 2019, no. 43734/14, § 57

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289-րդ հոդվածով սահմանվում է կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդության քննության կարգը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանավորված մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն միջնորդություն ներկայացնելու դատարան կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին կալանքի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան յոթ օր առաջ: Միջնորդության պատճենն ուղարկվում է մինչդատական վարույթն իրականացնող քննիչին և հսկող դատախազին:

իրականացնել վերահսկողություն՝ հաղորդակցության կապերին հասանելիության արգելքը ապահովելու համար, և սա հաշվի է առնվում խափանման միջոցը ընտրելիս:

Ինչպես վերը նշվեց տնային կալանքի կիրառման կարգի վրա տարածվում են կալանքի համար սահմանված կանոնները:

Տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալին դատարան ուղեկցելու իրավակարգավորումները հաճախ խախտվում են: Այսպես, գործնականում տնային կալանքի դեպքում մեղադրյալի ուղեկցումը բնակության վայրից դատարան ու հակառակը իրականացվում է Ոստիկանության միջոցով: Մեղադրյալների ուղեկցման հարցը կարգավորելու համար կիրառվել է կալանքի համար սահմանված կանոնները, ինչպես նաև Ոստիկանության մասին և Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքները: Ոստիկանության մասին օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ ՀՀ ոստիկանությունը պարտավոր է կատարել ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցում և պահպանում՝ Կառավարության սահմանած կարգով: Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձը տեղափոխվում է պահակախմբով՝ պետության միջոցների հաշվին:

Սակայն գործնականում լինում են դեպքեր, որ ոչ ոք չի ուղեկցում տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալին դատարան: Եղել է դեպք, որ փաստաբանը զանգի միջոցով զգուշացրել է դատավորին, որ մեղադրյալին ինքը կուղեկցի դատարան և ստանալով դատարանի թույլտվությունը՝ մեղադրյալը փաստաբանի ուղեկցությամբ բնակության վայրից տեղափոխվել է դատարան:

Որոշակի և կանխատեսելի չեն տնային կալանքի կիրառման դեպքում մեղադրյալի բնակության վայրի որոշման (հաստատման), անհրաժեշտության դեպքում՝ դրա փոփոխման վերաբերյալ իրավակարգավորումները:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ մեղադրյալն է տրամադրում փաստացի բնակության հասցե, որը կարող է լինել նաև վարձակալությամբ բնակության տարածքի հասցե: Լինում են դեպքեր, որ անձանց սեփականությունը կամ հաշվառված լինելու հասցեն տարբերվում է փաստացի բնակության հասցեից, դատարանը հաշվի է առնում այս հանգամանքները, և որպես կանոն, որոշման մեջ նշում է փաստացի բնակության հասցեն: Եթե անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցված, ապա քննիչն է դատարանին ներկայացնում տեղեկություն մեղադրյալի հաշվառված լինելու և փաստացի բնակության մասին, դատարանը լրացուցիչ այլ ապացույց չի պահանջում, միայն ճշտում է մեղադրյալից արդյոք նա բնակվում է նշված հասցեում: Վարույթ իրականացնող մարմինը տիրապետում է ամբողջական նյութերին, և դատարանը ելնում է այն կանխավարկածից, որ բնակության հասցեի հետ կապված եթե խնդիրներ լինեն, ապա վարույթ իրականացնող մարմինը դրանք դատարանին կներկայացնի: Հետագայում դատարանի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության պատասխանատվությունը կրում է վարույթ իրականացնող մարմինը ու Պրոբացիայի ծառայությունը:

Գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջացել փոխել մեղադրյալի բնակության հասցեն: Պրոբացիայի ծառայողները այցելել են բնակության վայր, բայց հարմարություն չի եղել տեղադրել էլեկտրոնային հսկողության միջոցները կամ էլեկտրական հոսանքը անջատված է եղել չվճարված լինելու պատճառով: Կարող է լինել իրավիճակ, երբ մեղադրյալը կրում է կալանքը վարձակալված տարածքում, վարձատուն որոշել է լուծել վարձակալության պայմանագիրը, իսկ դատարանի որոշմամբ սահմանված է կոնկրետ հասցե, որտեղ անձը պետք է կրի տնային կալանքը: Նման դեպքերում, Պրոբացիայի ծառայությունը այդ մասին տեղեկացրել է վարույթն իրականացնող մարմնին, որը դիմել է դատարան բնակության հասցեն փոխելու միջնորդությամբ: Դատարանը նիստ է հրավիրում միջնորդությունը քննելու համար: Այն դեպքերում երբ չկա այլ բնակության հասցե, ապա տնային կալանք չի կարող կիրառվել:

Հետազոտության մասնակիցներից ոմանք նշեցին, որ տնային կալանքի կիրառման սկզբնական փուլում դատարանները որոշման մեջ նշում էին կոնկրետ բնակության հասցեն, սակայն քանի որ կիրառության ընթացքում առաջացան նման դեպքեր, այս խնդիրը լուծելու համար, որոշ դեպքերում դատարանները սկսեցին որոշումներում նշել կոնկրետ հասցեն և միևնույն ժամանակ սահմանել, որ անհրաժեշտության դեպքում մեղադրյալը կարող է պահվել այլ հասցեում: Նման մոտեցումը հնարավորություն տվեց առանց դատարան լրացուցիչ դիմելու իրականացնել հասցեի փոփոխություն: Սակայն այս հարցում չկա միատեսակ մոտեցում, և դատարանները տարբեր կերպ են նշում կատարում բնակության հասցեի մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել **դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը: Նորմի նման ձևակերպումը ենթադրում է, որ դատարանը պարտավոր է հստակ բնակության հասցե նշել որոշման մեջ, այլընտրանքային տարբերակներ թույլ չի տալիս:**

Առկա են իրավական և գործնական խնդիրներ ու բացեր՝ կապված մարդու անձնական կյանքի իրավունքի նկատմամբ հարգանքի, ներառյալ դրա բաղկացուցիչների սահմանափակումների հետ:

Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1. ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց.
2. շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց[16]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հեռախոսային խոսակցություններ ունենալու արգելքը չի տարածվում շտապ բժշկական օգնություն, իրավապահ մարմիններ կամ արտակարգ իրավիճակներում փրկարար ծառայություն կանչելու, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող մարմնի հետ կապ հաստատելու դեպքերի վրա: Այդ մասին մեղադրյալն անհապաղ պետք է տեղեկացնի վերահսկողություն իրականացնող մարմնին:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 123-րդ հոդվածի 2-րդ մաս

Տնային կալանքի դեպքում գործնականում կիրառվում են առավելագույն սահմանափակումները, ընդ որում առանց հիմնավորվածության և պատճառաբանության: Չի իրականացվում առանձին դեպքի հանգամանքների վերլուծություն և կոնկրետ սահմանափակումների անհրաժեշտության գնահատում՝ հաշվի առնելով մեղսագրվող հանցագործության տեսակը և գործի այլ առանձնահատկությունները:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ դատարանները բոլոր վերոգրյալ արգելքները միաժամանակ կիրառում են:

Արգելվում է նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, ինտերնետի հասանելիությունը, համակարգչից օգտվելը, հաղորդակցության այլ ձևերից, փաստային առաքանուց օգտվելը:

Եղել է դեպք, որ նամակագրության սահմանափակման արդյունքում մեղադրյալը չի ստացել մեղադրական եզրակացությունը: Ուստի դատարանը հատուկ նշում է կատարում որոշման մեջ, որ նամակագրությունը սահմանափակվում է, բացառությամբ պետական հիմնարկների նամակներից: Սակայն դատարանների միատեսակ մոտեցում այս հարցի կապակցությամբ առկա չէ:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ հեռախոսազանգի կամ ինտերնետից օգտվելու իրավունքի սահմանափակումը հատկապես կարևոր է կանխարգելելու նոր հանցագործությունների կատարումը: Օրինակ, թմրանյութեր են տարածվում առաքման ծառայությունների միջոցով և կարևոր է բացառել նման ռիսկերի առաջացումը:

Շփում այլ անձանց հետ/հյուրընկալել

Մեղադրյալն իրավունք ունի շփվելու միայն իր հետ համատեղ բնակվող անձանց հետ: Դատարանը որոշմամբ սահմանում է, որ երրորդ անձանց հյուրընկալելը արգելվում է: Արդյունքում ստեղծվում է իրավիճակ, որ մեղադրյալի հետ բնակվող ընտանիքի անդամը նույնպես չի կարող հյուր ընդունել: Խնդիրներ են եղել, երբ ընտանիքի անդամները անակնկալի են եկել դատարանի որոշմամբ ամրագրված սահմանափակումներից, քանի որ նրանց համաձայնությունը դատարանը չի ճշտել: Նրանք կանխավ տեղեկացված չեն եղել, որ իրենց հասցե չի կարող այցելել երրորդ անձ՝ իրենց բարեկամը, հարևանը կամ այլ անձ և շատ ցավագին են ընդունել նման տեղեկությունը: Արդյունքում առաջացել են կոնֆլիկտային իրավիճակներ ընտանիքի անդամների և մեղադրյալի միջև: Շատ են եղել դեպքեր, երբ բնակարանի սեփականատերերը կամ ընտանիքի անդամները դժգոհություն են արտահայտել, որ իրենց համաձայնությունը չեն քննարկել դատարանում, իրենք բոլորովին տեղեկացված չեն եղել հնարավոր սահմանափակումների մասին: Ընտանիքի անդամը նույնիսկ զրկվել է իր աշխատանքի իրավունքի իրացումից, քանի որ երրորդ անձանց մուտքը բնակարան արգելվել է, իսկ նա եղել է կրկնուսույց, և պարապել է աշակերտների/ուսանողների հետ տանը ու այս աշխատանքի միջոցով ապահովել է ընտանիքի ապրուստը: Օրենսդրական պահանջ նախատեսված չէ սեփականատերերի, ինչպես նաև մեղադրյալի հետ բնակվող անձանց՝ մեղադրյալի նկատմամբ տնային կալանք կիրառելու համաձայնության համար:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ բնակարանի սեփականատիրոջ համաձայնությունը կարիք չկա, որ պարտադիր լինի, եթե վերջինս չի բնակվում տվյալ բնակարանում, քանի որ նրա իրավունքների սահմանափակում տեղի չի ունենում: Սակայն այն պարագայում, երբ սահմանափակումները կարող են ազդել ընտանիքի անդամների վրա, օրինակ, նրանք չեն կարող հյուրեր ընդունել, ապա նրանց համաձայնությունը դատարանի կողմից անհրաժեշտ է քննարկել: Առանձին դեպքերում դատարանը ճշտում է՝ արդյոք սեփականատերերը կամ ընտանիքի անդամները տալիս են իրենց համաձայնությունը բնակության վայրում հյուրեր ընդունելու սահմանափակման վերաբերյալ, և հաշվի է առնում նրանց կամահայտնությունը որոշում կայացնելիս: Սակայն ոչ բոլոր դեպքերում է դատարանը մեղադրյալի հետ համատեղ բնակվող անձանց համաձայնությունը ստուգում: Այս պարագայում նույնպես դատարանների կողմից միատեսակ մոտեցում առկա չէ:

Երբեմն դատարանի որոշմամբ սահմանվում է հաղորդակցության սահմանափակում, բացառությամբ փաստաբանի: Որոշ դեպքերում ուղղակիորեն չի նախատեսվում նման բացառություն, սակայն փաստաբանի հետ շփումը անարգել է և անսահմանափակ: Եղել են դեպքեր, որ դատարանը նշել է՝ հաղորդակցության սահմանափակում է կիրառվում, բացառությամբ իր հետ բնակվող ազգականների կամ ընդհանուր առմամբ, մերձավոր ազգականների: Եթե դատարանը մերձավոր անձի հետ շփման սահմանափակում է նախատեսել, կողմը կարող է վիճարկել դա և հիմնավորել, թե ինչու կոնկրետ անձի հետ չպետք է սահմանափակում կիրառվի: Օրինակ, եղել է դեպք, երբ մեղադրյալի ներկայացուցիչը նշել է, որ շփվելու սահմանափակումը երեխայի նկատմամբ չպետք է կիրառվի, քանի որ չնայած մեղադրյալը ամուսնալուծված է՝ պետք է իրավունք ունենա շփվելու երեխայի հետ: Այս պարագայում, դատարանի որոշմամբ երեխայի հետ շփումը չի սահմանափակվել:

Պրոբացիայի ծառայությունն իրականացնում է մեղադրյալի բնակության վայրի տարածքի նշագրում և սահմանում, թե մեղադրյալը որ հատվածներ չի կարող դուրս գալ: Հստակ սահմանվում են թույլատրելի տարածքի սահմանները: Էլեկտրոնային հսկողության հիմնական սարքը և մեղադրյալի վրա տեղադրվող սարքը միայն աշխատում է կոնկրետ հեռավորության պարագայում: Եթե մեղադրյալը նշագրված տարածքի սահմաններից դուրս է գալիս, հիմնական սարքը ազդանշան է տալիս:
Եղել է դեպք, որ անձը առանձնատանն է բնակվել, իսկ ջուրը գտնվել է բակային հատվածում, որից օգտվել են նաև հարևանները: Նշագրված տարածքից այդ հատվածը պետք է դուրս մնար, որ ապահովվեր հարևանների հետ շփման սահմանափակումը, սակայն մյուս կողմից ջրից օգտվելու իրավունքի սահմանափակում էր առաջանում. այս և նմանատիպ հարցերը լուծելու իրավական հնարավորությունները հստակ և կանխատեսելի չեն:

Տնային կալանքի տակ գտնվող անձը չի կարող ընդունել վարսավիր, առաքիչ, փոստատարից ստանալ նամակ, և այլն: Կարծում ենք, որ հաղորդակցության բացարձակ սահմանափակումը միշտ չէ, որ հիմնավորված է և ծառայում է իր նպատակին: Նման բացարձակ սահմանափակումը գրեթե անհնար է գործնականում ապահովել մի կողմից, և մյուս կողմից, անհնար է լիարժեք վերահսկողություն իրականացնել այդ արգելքների պահպանման նկատմամբ:

Այլ իրավունքներ

Տնային կալանքի տակ գտնվող անձը պետք է օգտվի բոլոր իրավունքներից, որոնք նախատեսված են կալանավորված անձի պարագայում, քանի որ տնային կալանքը կալանքի տեսակներից է:

Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում են ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները: Դրանք են, ի թիվս այլ իրավունքների.

- առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալու բավարար սնունդ, բժշկական օգնություն, հոգեբանական, հոգեթերապևտիկ աջակցություն, ինչպես նաև զննվելու իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին.
- ստանալ իրավաբանական օգնություն.
- հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ.
- հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.
- ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով.
- աշխատել:

Առողջության պահպանման իրավունք

Ինչպես վերը նշվեց հեռախոսային խոսակցություններ ունենալու արգելքը չի տարածվում շտապ օգնություն կանչելու դեպքի վրա[17]:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ հաշվի առնելով նշված նորմը մեղադրյալը կարող է անմիջապես զանգահարել շտապ բժշկական օգնություն: Մինչդեռ բժշկական զննության համար, նա պետք է տեղեկացնի դրա մասին Պրոբացիայի ծառայությանը, իսկ Պրոբացիայի ծառայությունը դրա մասին տեղեկացնում է Քննչական մարմնին: Եթե քրեական գործը գտնվում է մինչդատական վարույթում, ապա Քննչական մարմնի թույլտվության հիման վրա անձը կարող է Ոստիկանության ծառայության ուղեկցությամբ կամ առանց նման ուղեկցության այցելել բժշկական հաստատություն: Հետազոտության մասնակիցներից ոմանք նշեցին, որ մարզերում հիմնականում մեղադրյալին չեն ուղեկցում:

Եթե քրեական գործը գտնվում է դատական վարույթում, ապա անհրաժեշտ է դատարանի թույլտվությունը: Մեղադրյալը նույնպես կարող է ուղղակիորեն միջնորդություն ներկայացնել դատարան՝ բժշկական ծառայություններից օգտվելու խնդրանքով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր միջնորդությունը պետք է քննության առնվի այն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Գործնականում դատարանը այս հարցի կապակցությամբ առանձին նիստ

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 123-րդ հոդվածի 3-րդ մաս

չի հրավիրում, ի տարբերություն հասցեի փոփոխության վերաբերյալ միջնորդությունների քննության առնելու, որոնց դեպքում պարտադիր դատական նիստ է հրավիրում:

Այսպիսով, օրենսդրորեն հստակ չէ, թե տնային կալանքի տակ գտնվող անձին վերաբերող առանձին իրավունքներից օգտվելու կամ պայմանների փոփոխության վերաբերյալ միջնորդությունների քննարկման համար դատական նիստ պետք է հրավիրվի, թե ոչ:

Բժշկական աջակցության թույլտվություն ստանալու նպատակով դատարան դիմելիս կողմը ներկայացնում է տեղեկանք առողջական վիճակի վերաբերյալ: Սակայն հասկանալի չէ, եթե անձը գտնվում է տնային կալանքի տակ և չի կարող այցելել բժշկական հաստատություն՝ տեղեկանք ստանալու համար, ինչպես կարող է բժշկական աջակցության դիմելու համար հիմքեր ներկայացնել դատարանում: Միևնույն ժամանակ լինում են դեպքեր, երբ անհրաժեշտ է բժշկական խորհրդատվություն՝ թերապևտի կողմից կամ պոլիկլինիկայի բժշկի այց, այլ ոչ շտապ օգնության բժշկի: Տվյալ դեպքում մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա զանգահարել բժշկի և կանչ գրանցել:

Բավարար սննդի իրավունք

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ դատարանները, որպես կանոն, հարց են բարձրացնում, թե ում հետ է բնակվում մեղադրյալը, ով է ապահովելու սննդով: Եթե անձը միայնակ է բնակվում և չի կարողանա սննդով իրեն ապահովել, ապա դատարանները հակված չեն կիրառել տնային կալանք: Սակայն եթե դատարանը պարզում է, որ հնարավոր է ապահովել անձի կեցությունը՝ անձի ամուսինը կամ մերձավոր ազգականը կարող է իրեն ապահովել սննդով, մասնավորապես, առցանց պատվիրել սնունդն ու այլ պարագաները, որոնք առաքիչը կհասցնի նրա բնակության վայր, ապա դատարանը նշանակում է տնային կալանք: Մեկ այլ տարբերակ է նաև այն, որ դատարանը կարող է նաև տվյալ դեպքում թույլատրել, որ ընտանիքի անդամները այցելեն մեղադրյալին և ապահովեն սննդով:

Տնային կալանքի տակ գտնվող անձը զրկված է աշխատանքի հնարավորությունից, և իր սննդի ապահովման ծախսերի խնդիր կարող է առաջանալ՝ ի տարբերություն կալանքի տակ գտնվող անձի, ում սնունդը ապահովվում է պետության կողմից: Դատարանը պետք է այս հանգամանքները հաշվի է առնի տնային կալանքը նշանակելու ժամանակ. անձը պետք է գոնե մեկ մերձավոր ազգական ունենա կամ ֆինանսական միջոցներ՝ իրեն սննդով ապահովելու համար, հակառակ դեպքում՝ այս խափանման միջոցը չի կարող նշանակվել՝ կիրառության անհնարինության պատճառով:

Օրենսդրական պահանջ չկա մեղադրյալի հետ համատեղ բնակվող անձանցից ճշտելու համաձայնությունը՝ արդյոք նրանք կապահովեն մեղադրյալին սննդով: Եթե անձը մենակ չի բնակվում, կա զուտ ենթադրություն, որ իր հետ համատեղ բնակվող անձինք կապահովեն նրան սննդով, սակայն դատարանը պարտավոր չէ այս հանգամանքը պարզել տնային կալանք կիրառելու ժամանակ:

Ստանալ իրավաբանական օգնություն, հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ

Հետազոտության բոլոր մասնակիցները նշեցին, որ մեղադրյալի համար իրավաբանական օգնություն ստանալու, փաստաբանի հետ հաղորդակցության խնդիրներ չեն ծագել: Փաստաբանը ցանկացած ժամանակ, անարգել կարող է տեսակցել մեղադրյալին:

Ինչպես վերը նշվեց, երրորդ անձանց հետ հաղորդակցությունը և տեսակցությունը արգելվում է դատարանի որոշմամբ: Միայն առանձին դեպքերում տնային կալանք խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս դատարանում, մեղադրյալի միջնորդությամբ և համապատասխան հիմնավորումների առկայության պարագայում, կոնկրետ անձի հետ, օրինակ՝ մերձավոր ազգականի հետ, կարող է թույլատրվել տեսակցություն: Սակայն դատարանի կողմից տնային կալանքի որոշումը կայացնելուց հետո քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում ընթացակարգ դատարան դիմելու և կոնկրետ անձանց հետ տեսակցության թույլտվություն ստանալու համար: Մեղադրյալները, որոնց նկատմամբ կիրառվել է տնային կալանք, հիմնականում բնակվել են մերձավոր ազգականների հետ, և նրանց հետ տեսակցության անհրաժեշտության խնդիր չի ծագել, սակայն միայնակ բնակվող անձանց պարագայում մերձավոր ազգականի հետ տեսակցության սահմանափակումը կարող է համարվել իրավունքի խախտում:

Բացօթյա զբոսանքի և ութժամյա գիշերային քնի իրավունք

Բացօթյա զբոսանք չի կարող կիրառվել տնային կալանքի դեպքում: Նման հնարավորություն կարող են ունենալ միայն առանձնատանը բնակվող մեղադրյալները: Այս իրավիճակը խնդրահարույց է, քանի որ կալանքի տակ գտնվող անձինք և առանձնատանը տնային կալանքի տակ գտնվող անձինք կարող են օգտվել բացօթյա զբոսանքի իրավունքից, մինչդեռ բնակարանում բնակվող անձը, որի նկատմամբ կիրառվել է տնային կալանք, զրկված է նման իրավունքից:

Ինչ վերաբերում է տնային կալանքի տակ գտնվող անձի գիշերային քնի իրավունքի ապա նշենք, որ բնակության վայրում Պրոբացիայի ծառայությունը տեղադրում է հեռախոս՝ Պրոբացիայի ծառայության հետ կապ ապահովելու համար: Դրանով պարբերաբար զանգահարում են և ստուգում՝ արդյոք մեղադրյալը գտնվում է բնակության հասցեով: Հետազոտության մասնակիցները նշեցին, որ գիշերը շատ անսպասելի ժամերին կարող են զանգահարել: Լինում են դեպքեր, որ մի քանի անգամ են զանգահարում գիշերային ժամերին: Գտնում ենք, որ գիշերային ժամերին զանգահարելը այն դեպքում, երբ էլեկտրոնային հսկողության միջոցները տեղեկացնում են, որ անձը գտնվում է իր բնակության վայրում, խնդրահարույց է: ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ, թե քանի անգամ պետք է Պրոբացիայի ծառայությունը զանգահարի մեղադրյալին, և ժամային սահմանափակում նույնպես նախատեսված չէ:

Ընդհանուր առմամբ, կարող ենք արձանագրել, որ տնային կալանքի տակ գտնվող անձի՝ բացօթյա զբոսանքի իրավունքից օգտվելու հնարավորությունը սահմանափակված է, ի տարբերություն կալանքի տակ գտնվող անձանց: Այս սահմանափակումը պայմանավորված է վերահսկողական ոչ բավարար մեխանիզմների առկայությամբ: Սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ անձի զբոսանքի հնարավորության բացակայությունը կարող է բացասական հետևանքներ ունենալ նրա ֆիզիկական և հո-

գեկան առողջության վրա: Հետևաբար, երկարաժամկետ կտրվածքով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել օրական գոնե մեկ ժամ մեղադրյալի բացօթյա զբոսանքի հնարավորությունը ապահովելու համար:

Կրթության և աշխատանքի իրավունք

Կրթության իրավունքի իրացումը տնային կալանքի տակ գտնվելիս խնդրահարույց է: Քանի որ հաղորդակցության միջոցներից մեղադրյալը չի կարող օգտվել, արդյունքում համակարգչից նույնպես չի կարող օգտվել: Հետազոտության մասնակիցների պրակտիկայում չի եղել դեպք կրթության իրավունքի ապահովման հետ կապված:

Աշխատանքի իրավունքը նույնպես գրեթե մեծամասնության դեպքերում հնարավոր չէ իրացնել: Միայն նշվեց դեպք, որ անձը դերձակ է եղել, և իր բնակության վայրում հնարավորություն ունեցել է իրականացնելու իր աշխատանքը: Սակայն պատվիրատուների հետ հանդիպումների խնդիր է ծագել կամ իրականացրել է նման հանդիպումներ՝ խախտելով դատարանի կողմից երրորդ անձանց հետ չհաղորդակցվելու պահանջը: Այս և հիպոթետիկ մի շարք այլ օրինակների հաշվառմամբ՝ դատարանները պետք է անհատական մոտեցում ցուցաբերեն աշխատանքային իրավունքի իրացման հարցում: Այն դեպքերում, երբ տնային կալանքի տակ գտնվող անձը կարող է իր ապրուստը ապահովել աշխատանքով, չխախտելով տնային կալանքի այլ անհրաժեշտ սահմանափակումները, նա պետք է հնարավորություն ունենա իրականացնել իր աշխատանքի իրավունքը՝ առանց լրացուցիչ սահմանափակումների:

Սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն

Հետազոտության բոլոր մասնակիցները նշեցին, որ տնային կալանքի դեպքում սահմանափակումների նկատմամբ վերահսկողության ապահովումը լուրջ խնդիր է:

Հաղորդակցության ձևերի (նամակագրություն, հեռախոս) սահմանափակման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործուն մեխանիզմներ չկան: Հատկապես եթե նման սահմանափակում է կիրառվում այն հանցագործությունների դեպքում, որոնք տեղի են ունեցել կապի հաղորդակցության միջոցներով (համակարգչային տեխնիկա, հեռախոս), երաշխիք չկա, որ տվյալ անձը նոր հանցանք չի կատարի խափանման միջոցի կիրառման ընթացքում: Հատկապես պետք է հաշվի առնել այն դեպքերը, երբ անձը մեղսագրվող հանցագործությունները կատարել է հենց հաղորդակցության միջոցներ կիրառելու միջոցով: Նույնը վերաբերում է ինտերնետի հասանելիությանը: Ի վերջո, պետք է նկատի ունենալ, որ մեղադրյալը գործնականում կարող է օգտվել ընտանիքի անդամների հեռախոսից: Այս ամենի հաշվառմամբ՝ հաղորդակցության միջոցների նկատմամբ հսկողությունը, սահմանափակման կիրառումը խնդրահարույց է: Անհրաժեշտ են լրացուցիչ տեխնիկական միջոցներ՝ սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Հետազոտության մասնակիցները նշեցին, որ գործնականում վարույթ իրականացնող մարմինները չեն ստացել այնպիսի միջնորդություններ կամ փաստաթղթեր, որոնց համաձայն՝ խախտվել են հաղորդակցության սահմանափակումները, և սա կարող է պայ-

մանավորված լինել այն հանգամանքով, որ նման խախտումների վերհանումը բարդ է, այլ ոչ թե այն պատճառով, որ դրանք երբևէ տեղի չեն ունենում:

Մյուս կողմից առկա է խնդիր տնային կալանքի տակ գտնվող անձի իրավունքների իրացման, որոշումների կայացման ընթացակարգերի առումով: Օրինակ Էստոնիայում, անձին 5 օր կալանավորում են, որի ընթացքում Պրոբացիայի ծառայությունը կազմում է զեկույց անձի բնակության վայրի, պայմանների, բնակվող անձանց համաձայնության և այլ հարցերի վերաբերյալ և միայն զեկույցը դատարանում ներկայացնելուց հետո դատարանը քննարկում է և որոշում կայացնում տնային կալանք կիրառելու վերաբերյալ: Պրոբացիայի ծառայությունը մշակում է այս անձի համար օրինակ զբոսանքի, խանութ գնալու կամ այլ հարցերի համար գրաֆիկ և մեղադրյալը պարտավոր է միայն այդ գրաֆիկով առաջնորդվել:

ՀՀ-ի դեպքում ինչպես նշվեց հաղորդակցության բացարձակ արգելք է կիրառվում, զբոսանքի իրավունքի բացառում և մի շարք այլ իրավունքների մասով նույնպես ծագում են խնդիրներ, օրինակ բժշկական ծառայություններից օգտվելու առումով:

Պրոբացիայի մասին օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է տնային կալանքի կատարման առանձնահատկությունները, որի 1-ին մասի համաձայն՝ տնային կալանք կիրառելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է պրոբացիայի շահառուին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում քրեական վարույթն իրականացնող մարմնին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու մասին դատական ակտի պահանջները պարտադիր են պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինների, կազմակերպությունների, աշխատավայրի վարչակազմի, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերի համար, որտեղ դատարանի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել:

Պրոբացիայի մասին օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն **անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը,** նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, **իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ:** Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

Պրոբացիայի մասին օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝պրոբացիայի շահառուի կողմից իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող այլընտրանքային խափանման միջոցի պայմանների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու և իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող սահմանափա-

կումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց:

Պրոբացիայի ծառայությունը իրականացնում է մեղադրյալի բնակության վայր այցեր, և տնային կալանքի պայմանների խախտման փաստը արձանագրելու դեպքում, այդ մասին պետք է տեղեկացնի վարույթ իրականացնող մարմնին: Վարույթ իրականացնող մարմինն է որոշում արդյոք առկա է խախտում, թե՝ ոչ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտության դեպքում իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում այլ՝ առավել պիտանի խափանման միջոց կիրառելու համար:

Տնային կալանքի պայմանների խախտման պարագայում կարող է խափանման միջոցը փոխվել կալանքի: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նախատեսված չէ, ապա կալանքը կարող է կիրառվել միայն մեղադրյալի կողմից իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում:

Տնային կալանքի կատարման և դրա պայմանների նկատմամբ հսկողության իրականացման կարգի թերի կարգավորվածության պատճառով գործնականում կարող են առաջանալ մի շարք խնդիրներ:

Հետազոտության մասնակիցները նշեցին, հաշվի առնելով օրենսդրական կարգավորումները, երեք աշխատանքային օրվա ընթացքում է Պրոբացիայի ծառայողը այցելում մեղադրյալի բնակության վայր և տեղադրում էլեկտրոնային սարքավորումը: Սակայն նախքան Պրոբացիայի ծառայության այցելելը մեղադրյալը գտնվում է հսկողությունից դուրս, կարող է իր կամքով չգնալ իր բնակության հասցե, և առկա է փախուստի վտանգ:

ՀՀ օրենսդրությամբ ինչպես վերը նշվեց հստակ չէ, թե տնային կալանքի տակ գտնվող անձի առանձին իրավունքների իրացման հնարավորությունը: Օրինակ բժշկի այցի, բնակարանում կենցաղային խնդիրների ծագման դեպքում ջրմուղագործի անհրաժեշտության և այլ դեպքերում ինչ ընթացակարգով է կարգավորվում և ինչպես են որոշումներ կայացվում: Կարծում ենք, որ օրենսդրական փոփոխություններ է անհրաժեշտ իրականացնել և նախատեսել, որ Պրոբացիայի ծառայությունը կարող է նման ընթացիկ հարցերի հետ կապված որոշումներ կայացնել: Մեղադրյալը պարտավոր է Պրոբացիայի ծառայությանը տեղեկացնել իր գործողությունների մասին, օրինակ, որ պատրաստվում է իր բնակարանում կոնկրետ ժամի հանդիպել կոնկրետ մարդու կամ պատրաստվում է զանգահարել որևէ մեկին կամ կարիք ունի այցելել որևէ վայր, օրինակ բժշկի: Նախապես տեղեկացված գործողություններից զատ այլ գործողությունե-

ը կհամարվեն խախտում: Ներկայումս գործնականում առանձին դեպքերում խնդիր է ծագում նույնիսկ գնահատել, թե որքանով է մեղադրյալի այս կամ այն գործողությունը համարվում տնային կալանքի պայմանի խախտում:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական հսկողությունը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում:

Վարչական հսկողության կատարումն ապահովում է Պրոբացիայի ծառայությունը՝ իր ստորաբաժանումների միջոցով[18]: Մեղադրյալը պարտավոր է դատարանի որոշման մեջ նշված քանակով այցելել Պրոբացիայի ծառայություն և գրանցվել:

Մեղադրյալի՝ Պրոբացիայի ծառայության տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում վարույթն իրականացնող մարմին[19]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1. առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը.
2. այցելել որոշման մեջ նշված որոշակի վայրեր.
3. հաղորդակցվել որոշակի անձանց հետ.
4. օրվա որոշակի ժամերի լքել իր բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը:

Այս արգելքները սահմանելիս հաշվի են առնվում մեղադրյալի առողջական վիճակը, ինչպես նաև աշխատանքի և ուսման պայմանները:

Մեղադրյալի նկատմամբ վարչական հսկողություն կիրառելու մասին որոշման պատճենը կատարման նպատակով ուղարկվում է դատարանի կողմից սահմանված իրավասու մարմնին: Իրավասու մարմինն անհապաղ գրանցում է մեղադրյալին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում վարույթն իրականացնող մարմնին[20]:

Ինչպես տնային կալանքի դեպքում, այնպես վարչական հսկողության պարագայում դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ,

18. Պրոբացիայի մասին օրենք, 12-րդ հոդվածի, 1-ին մաս
19. Պրոբացիայի մասին օրենք, 12-րդ հոդվածի 4-րդ մաս
20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի, 4-րդ և 5-րդ մասեր

քան երեք աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է պրոբացիայի շահառուին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահում քրեական վարույթն իրականացնող մարմնին[21]:

ՀՀ դատախազության վիճակագրության համաձայն՝ 2023 թ. դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 17 միջնորդություն, որից բավարարվել է 15-ը, մերժվել՝ 2-ը, իսկ 57 դեպքով դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է վարչական հսկողություն տեսակի խափանման միջոց:

ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրության համաձայն՝ վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանին ներկայացվել է 10 դեպքում միջնորդություն, որից բավարարվել է 8-ը, իսկ 2-ը մերժվել: 57 դեպքում վարչական հսկողություն կիրառվել է դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի մերժելու արդյունքում:

Հարցազրույցների մասնակիցները նշեցին, որ վարչական հսկողության սահմանափակումները կիրառվում են հաշվի առնելով գործի առանձնահատկությունները, մեղսագրվող արարքի բնույթը: Օրինակ կիրառվել է ընտանեկան բռնության, աղջկա առևանգման օժանդակման, կաշառք տալու, և այլ դեպքերում: Եթե դեպքը տեղի է ունեցել ակումբում, դատարանը կարող է արգելել այցելել նմանատիպ վայրեր:

Ըստ մասնակիցների հարցազրույցների՝ հիմնականում ժամային սահմանափակումներ են կիրառվում, օրինակ երեկոյան 8-ից հետո չլքել մշտական բնակության վայրը կամ չփոխել վայրը, չլքել Երևան համայնքը: Եղել է դեպք, որ սահմանափակվել է կոնկրետ մարզ այցելելը:

Միևնույն ժամանակ նշվեց, որ դատարանները միշտ չէ, որ պատճառաբանում են, թե տվյալ դեպքում ինչու է որոշում կայացվել կոնկրետ սահմանափակում կիրառել: Հաճախ անհասկանալի է մնում, թե ինչու պետք է մեղադրյալը, օրինակ 12 ժամ բնակության վայրը չլքի: Տվյալ իրավիճակում հանցագործությունը տեղի էր ունեցել համալսարանում և ըստ գործով փաստաբանի՝ ավելի տրամաբանական կարող էր լինել, եթե վարչական հսկողությամբ արգելվեր համալսարան այցելելը, այլ ոչ 12 ժամ բնակության հասցեն չլքելը: Դատարանը իր որոշմամբ հստակ հիմնավորում չէր ներկայացնել:

Վերահսկողություն

Ինչպես տնային կալանքի դեպքում, այնպես վարչական հսկողության պարագայում վարչական հսկողության պայմանների խախտման դեպքում Պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնար-

21. Պրոբացիայի մասին օրենք, 13-րդ հոդվածի 1-ին մաս

կում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու և իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ ոստիկանությանը կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց[22]:

Վարչական հսկողության դեպքում, դատարանի որոշումների կատարման նկատմամբ հսկողության հարցը ավելի է բարդանում, որոշ դեպքերում ընդհանրապես անհնար է հսկողության իրականացումը: Ըստ հարցազրույցների մասնակիցների՝ շատ բարդ է վերահսկելը, թե մեղադրյալը այցելեց իր համար արգելված ժամանցի վայր, թե՝ այլ վայր: Դժվար է վերահսկել՝ մեղադրյալը հաղորդակցվել է դատարանի որոշմամբ արգելված անձանց հետ, թե՝ ոչ: Սակայն հարկ է նշել, որ ինչպես տնային կալանքի դեպքում, այնպես էլ վարչական հսկողության դեպքում օպերատիվ-հետախուզական գործողություններ կարող են իրականացվել՝ հայտնաբերելու համար դատարանի որոշմամբ սահմանված պահանջների (սահմանափակումներ) խախտումները, ներառյալ՝ որոշակի վայրեր չայցելելու, որոշակի անձանց հետ հաղորդակցություն չունենալու և այլն:

22. Պրոբացիայի մասին օրենք, 12-րդ հոդվածի 12-րդ մաս

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023 թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել տնային կալանքը և վարչական հսկողությունը որպես խափանման միջոցներ կիրառելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Միտումն այնպիսին է, որ դատարաններն անմիջապես չեն ընտրում առավել մեղմ տեսակի այս խափանման միջոցները, այլ հակված են աստիճանաբար փոփոխելու՝ մեղմացնելու դրանք: Սկզբում կալանքն է կիրառվում որպես խափանման միջոց, միայն հետագայում այն փոխվում է տնային կալանքի: Արդյունքում, տնային կալանքը ներկայումս ավելի հաճախ կիրառվում է դատաքննության փուլում: Սակայն ամեն դեպքում հաշվի են առնվում քրեական գործի առանձնահատկությունները՝ գործի հանգամանքները, մեղսագրվող արարքի բնույթը, ծանրությունը և այլն:

Տնային կալանքի դեպքում հիմնականում կիրառվում է հաղորդակցության բացարձակ արգելք, բացառությամբ համատեղ բնակվող անձանց: Կիրառվել է նամակագրության բացարձակ արգելք, ինչի արդյունքում մեղադրյալին նույնիսկ իր գործով դատարանի կողմից ուղարկված նամակների հասանելիության խնդիր է ծագել:

Մեղադրյալի նկատմամբ հսկողությունն իրականացվում է էլեկտրոնային հսկողության կիրառման համար օգտագործվող սարքավորումների միջոցով: Ինչպես տնային կալանքի, այնպես էլ վարչական հսկողության դեպքում հիմնական խնդիրը սահմանափակումների նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնելու հնարավորության բացակայությունն է: Բացի դրանից, խնդրահարույց է տնային կալանքի դեպքում առավելագույն սահմանափակումների կիրառումը՝ առանց դրանց անհրաժեշտության պատշաճ հիմնավորման և պատճառաբանման:

Սահմանափակուների նկատմամբ, հատկապես հաղորդակցության (տնային կալանքը կրելու վայրում հանդիպումների միջոցով, հեռախոսի միջոցով, ինտերնետով և այլն) վերահսկողությունը բավականին խնդրահարույց է: Ըստ հետազոտության մասնակիցների՝ եթե տնային կալանքի սահմանափակումների նկատմամբ լիարժեք վերահսկողություն հնարավոր լիներ իրականացնել, ապա այն որպես առաջին անգամ կիրառվող խափանման միջոց ավելի հաճախ կկիրառվեր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրական փոփոխություններ

- Օրենսդրորեն ամրագրել տնային կալանք կիրառելու վերաբերյալ մեղադրյալի հետ համատեղ բնակվող անձի համաձայնությունը ստանալու պարտադիր պահանջ:
- Օրենսդրորեն նախատեսել, որ Պրոբացիայի ծառայությունը իրականացնի ուսումնասիրություն և դատարանին ներկայացնի տնային կալանքի համար նախատեսված բնակության պայմանների վիճակի մասին տեղեկատվություն, ներառյալ մեղադրյալի հետ համատեղ բնակվող անձանց համաձայնությունը:
- Նախատեսել տնային կալանքի տակ գտնվող անձի՝ օրվա ընթացքում առնվազն մեկ ժամ զբոսնելու իրավունքը: Զբոսանքի իրավունքի իրացման նկատմամբ վերահսկողություն կարող է իրականացնել Պրոբացիայի ծառայությունը՝ տնային կալանքի տակ գտնվող անձի հետ հաստատված գրաֆիկի համաձայն:
- Օրենսդրորեն նախատեսել ընթացակարգ մեղադրյալի՝ տնային կալանքի տակ գտնվելու ժամանակ իրավունքների իրացման մասով որոշումների կայացման վերաբերյալ: Մասնավորապես, Պրոբացիայի ծառայությանը տալ իրավասություն որոշում կայացնելու մեղադրյալին վերաբերող ընթացիկ առողջապահական հարցերի (որոնք կապված չեն շտապ օգնության սպասարկման հետ), կենցաղային ապահովման կամ բարեկեցությանն առնչվող հարցերի վերաբերյալ՝ քննչական մարմնին կամ դատախազությանը տեղեկացնելու պայմանով:

Կիրառության փոփոխությանն ուղղված առաջարկություններ

- Բացառել տնային կալանքի դեպքում իրավունքների բոլոր սահմանափակումներն ավտոմատ կերպով կիրառելու պրակտիկան՝ սահմանելով միայն այնպիսիք, որոնք, կոնկրետ գործի հանգամանքներով ու առանձնահատկություններով պայմանավորված, անհրաժեշտ և բավարար են տվյալ գործի արդյունավետ նախաքննությունը կամ դատաքննությունը ապահովելու համար:
- Սահմանել այն անձանց ցանկը, որոնց հետ տնային կալանքի տակ գտնվող անձը կարող է տեսակցել (մերձավոր ազգական, առաքիչ, փոստատար, ընտանեկան բժիշկ և այլն) կամ սահմանել այն անձանց ցանկը, որոնց հետ արգելված է տեսակցությունը՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները:
- Հնարավորություն ընձեռնել, որ մեղադրյալն իրավունք ունենա սահմանափակ դեպքերում և ժամանակով հեռախոսային հաղորդակցություն ունենալ մերձավոր ազգականների հետ, իսկ մենակ բնակվող անձանց պարագայում այդ հնարավորությունը նաև տարածել սննդի և ոչ պարենային ապրանքների առաքման համար: Ստուգել առկա տեխնիկական հնարավորությունները՝ միայն սահմանափակ հեռախոսահամարներով հեռախոսով զանգահարելու համար:
- Թույլատրել կարևոր և անհրաժեշտ նամակագրությունը (օր. ստանալ ծանուցումները պետական և միջազգային մարմիններից, նամակագրություն մերձավոր ազգականի հետ և այլն):

- Ճշտել համատեղ բնակվող անձանց՝ մեղադրյալի կեցությունը ապահովելու համաձայնությունը:
- Ընձեռնել հնարավորություն, որ մենակ բնակվող անձը հնարավորություն ունենա օգտվել մոտակա խանութից սննդի և ոչ պարենային ապրանքների ձեռքբերման համար:
- Ընձեռնել հնարավորություն, որ մեղադրյալը կարողանա ստանալ բժշկական օգնություն և դեղորայք քրոնիկ հիվանդությունների կամ մշտական բժշկական հսկողության անհրաժեշտության պարագայում, ինչպես նաև հասանելիություն ունենա պոլիկլինիկային, կարողանա այց կատարել ատամնաբույժի կամ այլ բժշկի՝ Պրոբացիայի ծառայությանը տեղեկացնելու դեպքում:
- Թույլատրել մեղադրյալին աշխատել՝ կախված գործի հանգամանքներից, աշխատանքի բնույթից, կատարման վայրից, եթե դա չի խոչընդոտի նախաքննությանը կամ դատաքննությանը:
- Տնային կալանքի տակ գտնվող անձը պետք է հնարավորություն ունենա իրացնելու բոլոր այն իրավունքները, որոնք ունեն կալանքի տակ գտնվող մեղադրյալները:
- Վարչական հսկողություն խափանման միջոց կիրառելու որոշում կայացնելիս հիմնավորել ընտրված սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը:

Ուղեցույց դատարանների համար տնային կալանքի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնելու համար.

1. **Բնակության վայրի ֆիզիկական վիճակին վերաբերող հարցեր.**
   - բնակելի տարածքում համապատասխան հարմարության առկայություն էլեկտրոնային՝ հսկողության միջոցները տեղադրելու համար
   - կենցաղի ապահովման համար առկա նվազագույն պայմաններ

2. **Անձանց հետ տեսակցություն.**
   - թույլատրել մերձավոր ազգականների հետ հաղորդակցություն և/կամ տեսակցություն, ներառյալ նրանց, որոնք չեն բնակվում մեղադրյալի հետ (երեխա, ծնող, այլ)
   - նամակագրության սահմանափակման որոշում կայացնելիս հաշվի առնել, արդյոք անձը գտնվում է պարբերական նամակագրության մեջ որևէ անձի հետ, ներառյալ մերձավոր ազգականի հետ, թույլատրել պետական մարմիններից նամակագրության ստացումը և գնահատել արդյոք անհրաժեշտ է նամակագրության բացարձակ սահմանափակում
   - քննարկել փաթեթների (գիրք, հագուստ) ստացման հնարավորությունը

   <u>Եթե անձը բնակվում է հանրակացարանում</u>
   - սահմանել այն անձանց/հարևանների անունները, որոնց հետ անձը կարող է հաղորդակցվել ընդհանուր օգտագործման տարածքը (խոհանոց, լոգասենյակ) օգտագործելու համար

<u>Եթե անձը բնակվում է այլ անձանց հետ</u>

- տեղեկացնել համատեղ բնակվող անձանց տնային կալանքի կիրառման պարագայում սահմանափակումների մասին
- պարզել մեղադրյալի հետ համատեղ բնակվող անձանց կամահայտնությունը՝ բնակարանում երրորդ անձանց չհյուրընկալելու վերաբերյալ
- համատեղ բնակվող անձանցից ճշտել, արդյո՞ք նրանք կապահովեն մեղադրյալին բոլոր անհրաժեշտ միջոցներով տնային կալանքի պարագայում

3. Զբոսանքի իրավունք.

- առանձնատանը բնակվելու պարագայում, տրամադրել առանձնատան բակային հատվածից օգտվելու հնարավորություն
- քննարկել օրական առնվազն մեկ ժամ զբոսանքի իրավունքի իրացման հնարավորությունը

4. Աշխատանքի իրավունք.

- մեղադրյալն աշխատո՞ւմ է, ի՞նչ բնույթի աշխատանք է կատարում և կարո՞ղ է շարունակել աշխատանքը և եթե՝ այո, ապա ի՞նչ նախապայմանների պահպանման պարագայում՝ հաշվի առնելով նախաքննությանը կամ դատաքննությանը չխոչընդոտելու պահանջը

5. Առողջության իրավունք.

- ճշտել, արդյոք անձը ունի քրոնիկ կամ այլ հիվանդության առկայություն, որի դեպքում մշտապես անհրաժեշտ է դեղորայքի ապահովում և/կամ բժշկական աջակցություն, և թույլատրել նման աջակցություն ստանալ
- թույլատրել զանգահարել պոլիկլինիկա՝ բժշկին/թերապևտին տնայց կանչ ունենալու հնարավորությամբ
- եթե մեղադրյալը մենակ է բնակվում, թույլատրել զանգահարել որոշ դեղատների՝ անհրաժեշտության դեպքում դեղեր պատվիրելու համար

6. Կեցության ապահովման հնարավորություն.

- արդյո՞ք մեղադրյալը կարող է ապահովել իր կեցությունը՝ սնունդ, կենցաղային անհրաժեշտության պարագաներ, (հաշվի առնելով, որ տնային կալանքի կիրառության պարագայում նա չի կարող աշխատել)
- եթե մեղադրյալը միայնակ է բնակվում, ճշտել արդյոք նա ունի մերձավոր ազգական, որը կարող է իրեն ապահովել կեցության միջոցներով
- եթե անձը միայնակ է բնակվում, թույլատրել զանգահարել որոշ խանութներ՝ անհրաժեշտ ապրանք գնելու համար:

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից

JUREMONIA

NETHERLANDS HELSINKI COMMITTEE

PENAL REFORM INTERNATIONAL

CIVIL SOCIETY INSTITUTE ARMENIA

SOCIAL JUSTICE NGO

FOUNDATION
law development and protection

RIGHTS CENTRE